



ԿԱՐԳ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

ԱԿԱՂԵՄԻԱԿԱՆ ԱՐԾԱԿՈՒՐԴԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

(փոփոխություններով)

1. Սույնով սահմանվում են Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) բոլոր կրթական աստիճաններում սովորող ուսանողներին (դիպլոմավորված մասնագետներին, քակարյավրներին, մագիստրոսներին, այսուհետ՝ ուսանող) ակադեմիական արձակուրդի տրամադրման կարգը և պայմանները:
2. Ակադեմիական արձակուրդ տրամադրվում է բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերով ուսումնառող ուսանողներին՝ ըստ առողջապահական հիմնարկի բժշկասոցիալական փորձաքննության եզրակացության:
3. Ակադեմիական արձակուրդի տևողությունը մեկ օրացուցային տարի է, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:
4. Ակադեմիական արձակուրդ տրամադրելու մասին որոշումը կայացնում է Համալսարանի ռեկտորը: Հրամանագրման համար հիմք է ծառայում ուսանողի դիմումը և պետական առողջապահական հիմնարկի բժշկափորձագիտական հանձնաժողովի եզրակացությունը:
5. Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի փոխհատուցմամբ ուսումնառող և կրթաթոշակ ստացող սովորողները, ուսանողները (մագիստրանտները) և ակադեմիական արձակուրդից վերադառնալուց հետո վերականգնվում են ուսուցման նույն համակարգում:  
Վճարովի ուսուցմամբ ուսումնառող և ակադեմիական արձակուրդում գտնվող սովորողի, ուսանողի (մագիստրանտի) կրթաթոշակ ստանալու կամ լրացուցիչ վճարումներ կատարելու պայմանները որոշվում է ուսումնական հաստատության և ուսանողի (մագիստրանտի) միջև կնքված պայմանագրի համաձայն:
6. Ակադեմիական արձակուրդ կարող է տրամադրվել մաս այն ուսանողներին, ովքեր համաձայն Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների միջև կնքված միջպետական պայմանագրերի և համաձայնագրերի կամ ՀՀ կրթության և գիտության նախարարության և այդ պետությունների կրթության կառավարման պետական մարմինների միջև կնքված համաձայնագրերի՝ մրցույթի կամ դրամաշնորհային ծրագրի մասնակցության արդյունքով հրավիրված են այդ երկրների համապատասխան ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու, որակավորումը բարձրացնելու կամ համատեղ հետազոտություններ կատարելու նպատակով:

7. Ակադեմիական արձակուրդից վերադարձած ուսանողին Համալսարանում ուսումը շարունակելու թույլտվություն տալիս է ռեկտորը՝ հրամանով, ուսանողի դիմումի համաձայն:
8. Ակադեմիական արձակուրդի ժամկետը լրանալուց հետո 10-օրյա ժամկետում չներկայանալու պարագայում ուսանողը ենթակա է համալսարանից հեռացման:
9. Ակադեմիական արձակուրդի դեպքում արական սեռի ուսանողները չեն կորցնում պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքը:
10. Ուսումնառության ժամանակահատվածում ուսանողը կարող է ձևակերպել ակադեմիական արձակուրդ ոչ ավելի, քան մեկ անգամ:
11. Ակադեմիական արձակուրդից վերադարձող ուսանողի կարգավիճակը (պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի փոխհատուցմամբ կամ բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձի մասնակի գեղջի կիրառման (վճարովի) մնում է նույնը):